ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՀԱԳՎԻ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Լոռու մարզի Հագվի գյուղը վերահիմնադրվել է 17-րդ դարում, առաջին վերաբնակիչները եղել են Օձունի, Հաղպատի հողազուրկ մի քանի ընտանիքներ, որոնց միացել է նաև Արցախից եկած մեկ ընտանիք: 1915 թվականի եղեռնից հետո Հագվիում հիմնվել են ևս մի քանի ընտանիքներ՝ Վանից, Մուշից և Ալաշկերտից: Վրաստանը Ռուսաստանին միանալուց և 1861 թվականի ռեֆորմից հետո, պետականացված հողերն օգտագործելու իրավունք է տրվում հագվեցիներին, ինչի հետևանքով գյու ղը մեծանում է: Այդ հողերը հիմնականում անտառային բացատներ էին, փոքր հողակտորներ: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատավելուց հետո Այգեհատ ու Մղարթ գյուղերի կալվածատերերի հողերով փոխհատուցված օձնեցիների հողերից հողաբաժիններ են տրվում նաև Հագվեցիներին Լոռվա սարահարթում:

Գյուղի կենտրոնում կա փոքրիկ եկեղեցի, որ կառուցվել է 12-րդ դարում, հետագայում այն վերականգնվել է, ինչը երևում է պատերի շարից: Գյուղի շրջակայքում բազում գյուղատեղիներ կան, իսկ շինարարարական աշխատանքների ժամանակ մեծաքանակ բրուտագործական առարկաներ են հայտնաբերվել տարբեր վայրերից: Վերջրս «Թազի Բողան» վայրում հայտնաբերվել են հսկայական տապանաքարեր: Գյուղի կենտրոնում շինարարական աշխատանքների ժամանակ 70-ական թվականներին եկեղեցու հիմքերից մեկուկես մետր ցած հայտնաբերվել են հնագույն դամբարաններ, այսպես կոչված մեծամարդկանց մնացորդներով: Սակայն, հնագիտական պեղումներ չեն իրականացվել:

Հագվի անվանումը ավանդաբար բացատրվում է մի քանի ձևով: Լենկ Թեմուրի արշավանքի, ապա վրաց-թուրքական պարբերական պատերազմների, ինչպես նաև Շահ Աբասի, Օմար խանի և Աղա Մահմադ խանի ասպատակություններից հետո ամայացած գյուղատեղում հայտնված Օձունցիներին անվանեցին հակվածներ, այսինքն հակվել են նոր տեղ, որից էլ իբր առաջացել է Հագվի անվանումը:

Մեկ այլ բացատրությամբ կալվածատերերից փախած և Ռուսական կայսրության նոր օրենքով պետական հողում ազատ ապրելու իրավունք ստացածներին անվանել են հակվածներ, այսինքն ճորտական կախվածությունից ազատվածներ:

Հակվել բառը մեկ այլ բացատրություն էլ ունի: Ըստ գյուղի մեծերի Օձունից այստեղ փայտ տեղափոխողների (նախկինում գյուղի տեղում խիտ անտառ է եղել), կամ ձմեռանոցից մթերք բարձած Օձուն գնացողների ձիու բեռը թեք տեղանքի պատճառով հակվել է, թեքվել, ինչի պատճառով ստիպված կանգնել են մի քանի անգամ ամրացրել բեռը, դրա համար էլ ըստ գյուղի մեծերի տեղանքն անվանել են հակվի տեղ, որը հետագայում դարձել է Հագվի: Դրա օգտին խոսում է այն, որ Հագվու հարևան Աքորի գյուղի տարեցները մինչև վերջերս թեք տեղերին անվանում էին «հակվա տեղ», այսինքն թեք տեղ:

Գյուղում գործում է հիմնական դպրոց, աշակերտների թիվը 32: Գործում է, բուժկետ, Հայփոստի բաժանմունք: Գյուղում ավանդաբար բարձր է եղել կրթական ցենզը և երկար տարիներ Ալավերդի քաղաքի և շրջանի կառավարման համակարգի միջին օղակներում բազմաթիվ հագվեցիներ են աշխատել: Ծնունդով եւ արմատներով Հագվեցի են թատերարվեստի երախտավորներ, ՀՀ ժողովրդական արտիստ Վոլոդյա Գրիգորյանը, վաստակավոր արտիստ Բորիս Պեպանյանը, հայտնի լրագրողներ Հրաչյա Պապինյանը, Վարդան Օնանյանը, գրող հրապարակախոս Արծրուն Պեպանյանը եւ ուրիշներ:

«ՀՀ Վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն Հագվի համայնքը ևս 7 գյուղերի հետ միասին ըդգրկվել են Օձուն համայնքի կազմում և ձևավորվել է մեկ ընդհանուր համայնք՝ Օձունի բազմաբնակավայր համայնքը: Համայնքի կենտրոնը համարվում է Օձուն գյուղը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հագվի բնակավայրը միջին լեռնային է, և շրջապատված է անտառներով թփուտներով և լեռներով: Լոռու մարզի Հագվի գյուղը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում, Ալավերդի քաղաքից 15 կմ, մարզկենտրոնից 45 կմ և համայնքային կենտրոնից 2 կմ հեռավորության վրա: Չնայած գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, սակայն գյուղում կա փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է 12-րդ դարում: Գյուղը գտնվում է ծովի մակերեւույթից 1200 մ բարձրության վրա, բնակավայրի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում է 3275,15 հա,որից վարելահող՝ 93,66 հա, խոտհարք՝43,07 հա: Հողատարածությունները ամբողջովին զրկված են ոռոգման ջրից, որի պատճառով հնարավոր չէ լիարժեք կազմակերպել գյուղմթերքների արտադրություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Հողի բերքատվությունը կախված է տարվա եղանակներից: Վարելահողերը մեծամասամբ դրված են անասնակերի տակ: Անասնակեր ներմուծվում է նաև հարեւան գյուղերից: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, ձու, մեղր, բուրդ: Գյուղը հարուստ է վայրի հատապտուղներով,որից օգտվում են բնակչությունը՝,որոշակի թեթևացնելով իրենց սոցիալական պայմանները: Հատապտղի իրացման համար,բնակչությունն ունի որոշակի դժվարություններ, որի համար անհրաժեշտ է գյուղում կառուցել փոքրիկ արտադրամաս:

Գյուղն ունի 134 տնտեսություն,որից առկա են 104-ը: ՈՒՆի 1 հիմնական դպրոց, 1 փոստ և 1 բուժ կետ,որը առաջին բուժ օգնությունն է ցուցաբերում Հագվու ազգաբնակչությանը: Գյուղը չունի մանկապարտեզ,չնայած մեծ է մանկապարտեզ հաճախելու ենթակա երեխաների թիվը: Երիտասարդության առօրյան աշխուժացնելու համար անհրաժեշտ է գյուղում կառուցել մշակույթի տուն:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հագվի գյուղն աչքի է ընկնում իր բարենպաստ, լեռնային մեղմ կլիմայով,որը պայմանավորված է ոչ մեծ բարձրությամբ՝ 1200 մ ծովի մակարդակից: Ձմռան ամենացուրտ ամիսը հունվարն է,հունվարյան միջին ջերմաստիճանը -5 աստիճան,, իսկ ամռան ամենատաք ամիսը հուլիսն է, միջին ջերմաստիճանը +20 աստիճան, բացարձակ նվազագույնը հասնում է -15 աստիճան,իսկ բացարձակ առավելագույնը՝ +34 աստիճան: Կլիման հիմնականում խոնավ է լինում գարնանը և աշնանը ,երբ հաճախակի են լինում անձրևներ և մառախուղ :

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	15
2.2) մայրաքաղաքից (կմ)	170
2.3) մարզկենտրոնից (կմ)	45
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	10

2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	15
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	5
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	6
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1200
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	32.75/3275,15
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Օձուն,Ամոջ,Աքորի,Կաճաճկուտ,Ալավերդի
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	098-03-38-23
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո,- 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	01.01.2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	396
2. Գրանցված ծնունդների քանակը	7
2.Մահացության դեպքերի քանակը	5
3.Ամուսնությունների քանակը	-
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	93
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	8
7. Կենսաթոշակառուների քանակը	98
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	33

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	-
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	-
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	15 800
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	213

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	3275,15
2. Բնակավայրերի հողեր (հա)	1848,56
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	-
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	1,55
5. Հատուկ նշանակության	
6. Հատուկ պահպանվող տարածքների	2,39
7. Անտառային	1340,30
8. Ջրային	5,08
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	301
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	538
11. Խոզերի գլուխաքանակը	421
12. Գյուղատնտեսական տեխնիկա	3
12.1 տրակտորներ (քանակը)	4
12.2 կոմբայններ (քանակը)	-
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	93

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո

5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	2
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	-
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	4
1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը
Մանկապարտեզի բացակայություն:	Մանկապարտեզի կառուցում:
Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ:	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում:
Ոռոգման ջրագծի բացակայություն:	Ոռոգման ջրագծի անցկացում: